https://doi.org/10.46991/S&L/2021.91.044

ԵՐԵԽԱՅԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայարփի Զարգարյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ,
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր

Գերմանացի իրավագետ Կ. Շտերնը նշում է, որ պետության սահմանադրությամբ ամրագրված հիմնարար իրավունքների հիմքը մարդու բնական իրավունքներն են: Դրանք բովանդակում են անձնական և բնական «սկիզբը», ապա դրանք զարգանում են պոզիտիվ-իրավական հարթության մեջ: Պետության կողմից իրավական ամրագրումը մարդու իրավունքների զարգացման բարձրագույն կետն է, երբ պոստուլատից դրանք վերածվում են իրավունքի՝ իրավաբանական իմաստով[1]:

Ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու իրավունքը մարդու այն անձնական իրավունքն է, որը համաշխարհային ճանաչում է գտել: Այս իրավունքն ունի հատուկ դեր և նշանակություն, քանի որ անմիջականորեն կապված է քաղաքացիության, իրավական կարգավիճակի հետ: Բնակության վայրի ազատ ընտրության իրավունքն ուղղակիորեն կապված է անձի և պետության միջև իրավական հարաբերությունների առկայության, այս կամ այն պետության սահմաններում գտնվելու ժամանակահատվածի հետ[2]:

Այսօր հասարակությունն ընտրել է իրավական զարգացման այնպիսի ուղի, որն ամբողջ աշխարհում ընդունելի է համընդհանուր ճանաչում գտած նորմերի և սկզբունքների ուժով: Զարգացման նման եղանակն իր հերթին նպաստում է իրավական նոր մոտեցումների ձևավորմանը: Ժամանակակից պայմաններում երեխայի բնակության վայրի որոշման հարցը չի կորցրել իր կարևորությունը և բարդությունը՝ մեծապես պայմանավորված ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու հանգամանքով: Երեխայի բնակության վայրի որոշումն էական դեր ունի անչափահասի ապագայի կանխորոշման հարցում[3]:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 27-րդ հոդվածը սահմանում է մասնակից պետությունների՝ յուրաքանչյուր երեխայի՝ իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքի ճանաչման սկզբունքը, ինչը կոչված է լավագույնս ապահովելու երեխայի՝ բնակության վայր ունենալու, դրա ազատ ընտրության, ինչպես նաև այն սահմանելու (որոշելու) հարցում երեխայի լավագույն շահի ապահովման երաշխիքները:

Այսպիսով, երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի համատեքստում կարևորվում է երեխայի բնակության վայր ունենալու իրավունքը, որը՝ որպես ինքնուրույն իրավունք, բայցև ազատ տեղաշարժվելու իրավունքի բաղկացուցիչ մաս, կարիք ունի սահմանման և օրենսդրական մակարդակում ամրագրման:

---

[1] Տե՛ս՝ Государственное право Германии, М., 1994 թվական, էջ 7:

[2] Տե՛ս՝ **С.А. Егоров, Т.А. Прудникова,** Вестник Московского университета МВД России, № 10, 2008, էջ 160:

[3] Տե՛ս **Е.В.Иванова, И.Ю. Семенова,** Правовые стимулы и правовые ограничения в отечественном семейном праве как современная теоретическая проблема [Электронный ресурс] // Oeconomia et Jus. 2016, № 2, էջ 14–19. URL: http://oecomia-et-jus.ru/single/2016/2/3:

Իրավաբան-գիտնականներ Ի. Յու. Սեմյոնովան և Ն.Վ. Ալեքսանդրովան նշում են, որ ըստ «ընդհանուր կանոնի»՝ բարեկեցիկ ընտանիքներում առկա չէ երեխայի բնակության վայրը որոշելու խնդիր, այլ այդպիսին ծագում է երեխայի՝ ծնողների միմյանցից առանձին ապրելու դեպքում[1]:

Ի.Ե. Միշինը նշել է, որ անձի բնակության վայրն այն տեղն է, որտեղ անձը գտնվում է մշտապես կամ առավելապես, իսկ անչափահաս երեխաների պարագայում բնակության վայրը նույնանում է իրենց օրինական ներկայացուցիչների բնակության վայրի հետ[2]:

Ա.Ա.Բերդնիկովան արտահայտել է այն կարծիքը, որ անձը չի կարող ունենալ մեկից ավելի բնակության վայր[3]:

Նա նաև նշել է, որ քաղաքացու բնակության վայր է այն բնակելի տարածքը, որտեղ նա մշտապես կամ առավելապես բնակվում է սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի իրավասությամբ: Ընդ որում, «գտնվելու վայր» հասկացությունը փաստացի կարող է չհամընկնել նրա «բնակության վայրի» հետ, այլ ընդամենն ամրագրել նրա՝ որոշակի ժամանակահատվածում այս կամ այն վայրում գտնվելու փաստը[4]:

Ներպետական իրավական ակտերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ անձի բնակության վայրի հասկացության սահմանումը դրանցում բացակայում է, առավել ևս՝ առկա չէ «երեխայի բնակության վայր» արտահայտության սահմանումը:

Այսպես, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքը[5] կարգավորում է բնակչության պետական ռեգիստրում օրենքով սահմանված կարգով անձնական հաշվառման (գրանցման) տվյալների մշակման, ինչպես նաև ռեգիստրի վարման հետ կապված հարաբերությունները: Նման ռեգիստրի ստեղծման նպատակն է բնակչության վերաբերյալ օրենքով սահմանված անձնական հաշվառման տվյալների այնպիսի տեղեկատվական համակարգի ստեղծումը, որը կոչված է ապահովելու Հայաստանի Հանրապետությունում բնակվող անձանց (անկախ քաղաքացիությունից), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս 183 օրից ավելի ժամկետով բնակվելու նպատակով հյուպատոսական հաշվառման կանգնած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ ըստ բնակության վայրի հաշվառումը:

Ռեգիստրի ստեղծման և վարման հիմնական սկզբունքներից է բնակչի ազատ տեղաշարժը և բնակության վայրի ազատ ընտրությունը, ինչը բխում է անձի՝ ազատ տեղաշարժվելու սահմանադրական իրավունքից:

Օրենսդրի կողմից հիշյալ իրավական ակտում ամրագրվել է այնպիսի հասկացություն, ինչպիսին է «մշտական բնակության վայրի (կացարանի) հասցե», որը մարդու անձնական տվյալն է, այսինքն՝ անձին անհատականացնելու միջոցներից մեկը:

---

[1] Տե՛ս՝ **И.Ю. Семенова, Н.В. Александрова.** Некоторые теоретические и практические вопросы, связанные с определением места жительства ребенка по законодательству РФ, file:///C:/Users/user/Downloads/nekotorye-teoreticheskie-i-prakticheskie-voprosy-svyazannye-s-opredeleniem-mesta-zhitelstva-rebenka-po-zakonodatelstvu-rf.pdf, 08.01.2021 թվականի դրությամբ:

[2] Տե՛ս **И.Е. Мишин,** К вопросу о некоторых проблемах при реализации прав граждан на выбор места жительства // Молодой ученый, 2017, №38. էջ 82 – 86:

[3] Տե՛ս **А.А. Бердникова,** Правовые проблемы определения понятия «место жительства» подопечных детей, Образование и право, № 3, 2020:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս Բնակչության պետական ռեգիստրի մասին ՀՀ օրենք, ընդունվել է 24.09.2002 թվականին, ուժի մեջ է մտել 31.10.2002:

Ընդ որում, մշտական բնակության վայր (կացարան) է համարվում այն տարածքը, որտեղ բնակիչն ունի բնակվելու իրավունք, որը նա համարում և հայտարարում է որպես իր կացարան: Մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս անձը պարտավոր է յոթնօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել այն համայնքի տեղական ռեգիստրին, որտեղ գտնվում է նրա նոր կացարանը: Բնակիչը կարող է հաշվառվել միայն մեկ կացարանում[1]:

Ներպետական իրավական ակտերի ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգել այն հետևության, որ բացի վերը նշված օրենքից՝ որևէ այլ իրավական ակտում առկա չէ «բնակության վայրի» հատկանիշներ սահմանող նորմատիվ ակտ:

Ավելին, ՀՀ իրավական համակարգում բացակայում է անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի մասին հատուկ օրենք, փոխարենը ստեղծվել է հաշվառման համակարգ, որը թույլ է տալիս հաշվառել անձին ըստ իր բնակության վայրի, ինչն օրենսդիրը նույնացրել է կացարանի հետ: Բացի այդ, անձը կարող է ունենալ միայն մեկ հաշվառման վայր, թեև չկա օրենսդրական որևէ արգելք հաշվառվել մեկ հասցեում, սակայն բնակություն հաստատել մեկ այլ հասցեում:

Հարկ է նկատել, որ մշտական բնակության վայրը կամ կացարանը մատնանշվում է հենց տվյալ անձի կողմից, ինչը մեր համոզմամբ կարող է պրակտիկ կիրառման դաշտում և հատկապես պետություն-քաղաքացի հարաբերություններում հանգեցնել բարդ խնդիրների: Օրինակ, դատական պրակտիկան վկայում է այն մասին, որ քաղաքացիների կողմից իրենց հաշվառման և փաստացի բնակության վայրի ազատ ընտրության իրավունքը հաճախ չարաշահվում է, և անձի կողմից որպես իր հաշվառման հասցե նշվում է այն վայրը, որտեղ անձն ընդհանրապես չի բնակվում, կամ նշվում է փաստացի բնակության վայրի հասցեն, որը հայցադիմումը դատարան ներկայացնելու պահի դրությամբ կարող է հանդիսանալ իր փաստացի բնակության վայրը, սակայն ոչ մշտական կամ առավելապես բնակության վայրը (հայցադիմումը ներկայացնելու պահին նշված հասցեն կարող է համապատասխանել անձի փաստացի գտնվելու վայրին, սակայն կարճ ժամանակ անց փոխվել): Նման դեպքերում բացակայում է որևէ մեխանիզմ ստուգելու, թե արդյոք անձի կողմից մատնանշված հասցեն իր փաստացի գտնվելու վայրի հասցեն է և արդյոք անձը հաշվառված է նշված հասցեում, թե ոչ:

Բանն այն է, որ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն իր կառուցվածքով և դատավարական գործողությունների կատարման մեխանիզմներով շեշտադրում է կատարում հենց անձի հաշվառման վայրի վրա, սակայն «հաշվառման» վայրի հետ մեկտեղ օրենսդիրն օգտագործում է «գտնվելու վայր» հասկացությունը, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ «բնակության վերջին հայտնի վայր» արտահայտությունը: Մեր համոզմամբ, թվարկված երեք արտահայտություններն իրենց բովանդակությամբ և իրավական իմաստով խիստ տարբեր են, մասնավորապես, *հաշվառման վայրն* այն հասցեն է, որն անձը ցույց է տալիս որպես իր «իրավաբանական» հասցե, և որը երրորդ անձանց հետ հարաբերություններում փաստացի ցանկանում է մատնանշել որպես իրեն նույնականացնելու, իր հետ հաղորդակցվելու հասցե:

Գտնվելու վայրն ավելի լայն հասկացություն է, և մեր համոզմամբ՝ անձը մեկ օրվա կամ մեկ ժամվա ընթացքում կարող է մի քանի անգամ փոխել իր գտնվելու վայրը: Հետևաբար, գտնվելու վայրը ժամանակավոր բնույթ է կրում, և այն իրավական առումով օժտված չէ բավարար երաշխիքներով, որպիսիք կարող են ապահովել անձի հետ մշտական և կայուն կապը, հաղորդակցությունը, ինչպես նաև հանդես գալ որպես անձին անհատականացնելու միջոց:

Ի վերջո, *բնակության վերջին հայտնի վայր* արտահայտությունը, որը որդեգրվել է օրենսդրի կողմից, մեր համոզմամբ այլընտրանքային եղանակ է քաղաքա-

[1] Տե՛ս Բնակչության պետական ռեգիստրի մասին ՀՀ օրենքի հոդված 7-րդ:

ցիական բնականոն իրավահարաբերությունների, ինչպես նաև դատական գործերի վարումն ապահովելու համար. այն հակառակ շահերով օժտված անձի իրավունքների և ազատությունների անխոչընդոտ իրականացման երաշխիքներից մեկն է, քանի որ դատական գործերով անձի բնակության վերջին հայտնի վայրի (հասցեի) վերաբերյալ նշում կատարվում է միայն այն դեպքում, երբ անձը չունի հաշվառման վայրի հասցե, հայտնի չէ կամ չունի բնակության վայր:

Այսպիսով, վերը ներկայացված դիտարկումների ամփոփմամբ կարող ենք հանգել այն հետևության, որ ***անձի բնակության վայրն այն բնակելի տարածքն է, որն ունի հասցե, ըստ որի պետք է իրականացնել նաև անձի հաշվառումը***: Մեր համոզմամբ, միայն հաշվառման ու բնակության վայրի նույնացման դեպքում կարող է ապահովվել պետության և այլ անձանց հետ փոխհարաբերություններում անձի անհատականացման միջոցով տեղորոշման կայուն երաշխիքի ստեղծումը, ինչը կնպաստի նաև բնակության և հաշվառման վայրերի կամայական մատնանշման միջոցով իրավունքների չարաշահումը: Ավելին, մեր դիտարկմամբ պետք է ստեղծել այնպիսի համակարգ, որը հնարավորություն կընձեռի արագ և արդյունավետ ապահովել անձի վերաբերյալ փաստացի գտնվելու (բնակության) վայրի մասին նշումներ և փոփոխություններ կատարելը, բացի այդ, պետք է պետության կողմից ապահովվի դրա նկատմամբ վերահսկողության այնպիսի մեխանիզմ, որը կբացառի չարաշահումները և անձի բնակության վայր չհանդիսացող հասցեներում նրանց հաշվառումը:

Այլընտրանքային մոտեցում է ամրագրված, օրինակ, Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ, այն է՝ «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների՝ Ռուսաստանի Դաշնության սահմաններում ազատ տեղաշարժվելու, գտնվելու և բնակության վայրը ընտրելու մասին» ՌԴ օրենքը[1] սահմանում է երկու տիպի հաշվառման կարգ՝ ըստ բնակության և ըստ գտնվելու վայրի, ինչը հնարավորություն է ընձեռում հստակ տեղեկություն ձեռք բերել տվյալ անձի վերաբերյալ և տեղորոշել նրան (հոդվ. 2):

Ավելին, ՌԴ օրենսդիրը «գտնվելու վայր» հասկացությունը սահմանել է հետևյալ կերպ. հյուրանոց, առողջարան, հանգստյան տուն, տուն-ինտերնատ, ճամբար, տուրիստական բազա, բժշկական կազմակերպություն կամ այլ նմանատիպ հաստատություն, քրեակատարողական համակարգի ինստիտուտ, ազատազրկման կամ հարկադիր աշխատանքի տեսքով պատիժ կատարող հաստատություն կամ բնակավայր, որը Ռուսաստանի Դաշնության քաղաքացու բնակության վայր չէ, որում նա ապրում է ժամանակավորապես:

Մինչդեռ բնակության վայրը բնութագրվում է որպես բնակելի տուն, բնակարան, սենյակ, մասնագիտացված բնակարանային ֆոնդի կամ այլ բնակելի տուն, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես բնակվում է որպես սեփականատեր՝ վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրով կամ օրենքով սահմանված այլ հիմքերով: Ռուսաստանի Դաշնության ազգային փոքրամասնություն հանդիսացող այն քաղաքացու բնակության վայրը, ով վարում է քոչվոր և (կամ) կիսաքոչվորական կենսակերպ և չունի մշտական (կամ առավելապես) բնակության վայր, սույն օրենքի իմաստով կարող է ճանաչվել համայնքապետարանի տարածքում գտնվող բնակավայրերից մեկը, որի սահմաններում անցնում են այս քաղաքացու քոչվորական ուղիները:

Ըստ Ա.Ա. Բերդնիկովայի՝ չեն նույնանում նաև «հաշվառման» և «բնակության վայր» հասկացությունները, քանի որ հաշվառման վայրն ինքնին անձի բնակության ենթադրյալ վայրն է, որը, սակայն, չի պարտավորեցնում նրան ֆիզիկապես բնակ-

[1] Տե՛ս՝ Закон Российской Федерации о праве граждан Российской Федерации на свободу передвижения, выбор места пребывания и жительства в пределах Российской Федерации, 25 июня 1993 года № 5242-I:

վելու այդ հասցեում, և հաշվառման փաստը չի կարող հանդիսանալ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների իրականացման սահմանափակող գործոն: Հեղինակն առանձնացնում է ըստ բնակության վայրի գրանցման և հաշվառման ինստիտուտները՝ նշելով, որ բնակության վայրի հաշվառման բացակայությունը խոչընդոտ չէ նրա փաստացի գտնվելու վայրի գրանցման համար, ինչը կարող է նպաստել քաղաքացիական իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև սահմանադրությամբ ամրագրված իրավունքների իրացման երաշխիքների ստեղծման համար: Այդպիսին են նաև ազատ տեղաշարժվելու իրավունքը, մայրության, մանկության և ընտանիքի պետական պաշտպանության արժանանալու իրավունքը[1]:

Վերը ներկայացված ուսումնասիրության արդյունքները կրկին վկայում են այն մասին, որ պետություն-քաղաքացի (ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում՝ քաղաքացիություն չունեցող անձ) իրավահարաբերություններում խիստ կարևոր է նրա բնակության վայրը որոշելը: Ընդ որում, բնակության վայրը չի նույնանում անձի գտնվելու վայրի հետ՝ ի հակադրումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում տեղ գտած ձևակերպումների, որոնցում, ինչպես վերը նշվեց, հաշվառման և գտնվելու վայր արտահայտությունները նույնացվել են:

Նյութական օրենսդրությունը խիստ կարևոր դեր է կատարում երեխայի բնակության վայրը որոշելու հարցում, ուստիև, մեր կարծիքով դատավարական օրենքը պետք է ոչ միայն բխի նյութական օրենքից, այլև չհակասի նրան, առավել ևս երբ խոսքը վերաբերում է հիմնական հասկացություններին:

Այսպես, ՀՀ ընտանեկան օրենսգիրքը պարունակում է «բնակության վայր», ինչպես նաև «գտնվելու վայր» հասկացությունները: Ի տարբերություն դատավարական օրենսգրքի՝ ՀՀ ընտանեկան օրենսգիրքը «գտնվելու վայր» արտահայտության կողքին որոշ հոդվածներում օգտագործում է նաև «փաստացի» բառը (օրինակ՝ հոդված 43, 63, 110), իսկ առանձին դեպքերում չի օգտագործում (օրինակ՝ հոդված 118): Վերջինի պարագայում գտնում ենք, որ այստեղ նույնպես խոսքը վերաբերում է *երեխայի փաստացի գտնվելու վայրին*:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում հիշատակվում է «բնակության վայր» հասկացությունը (հոդված 16)՝ երեխայի բնակելի տարածության իրավունքի համատեքստում:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան հիշատակում է «երեխայի բնակության վայր» արտահայտությունը միայն 9-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ «Մասնակից պետություններն ապահովում են, որ երեխան, հակառակ ծնողների ցանկության, չբաժանվի նրանցից, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինները գործող օրենքի և ընթացակարգի համաձայն կայացնեն որոշում, ինչը ենթակա է դատական վերահսկողության, որ այդպիսի բաժանումն անհրաժեշտ է երեխայի շահերը լավագույնս պաշտպանելու տեսակետից: Նման որոշում կարող է անհրաժեշտ լինել այս կամ այն կոնկրետ դեպքում, օրինակ, երբ ծնողները դաժանորեն են վարվում երեխայի հետ կամ հոգ չեն տանում նրա մասին, կամ երբ ծնողներն առանձին են ապրում, և ***հարկ է որոշում կայացնել երեխայի բնակության վայրի վերաբերյալ***»:

Վերը թվարկված իրավական ակտերում բացակայում են երեխայի բնակության վայրի հասկացությունը և դրա սահմանումը, ինչը մեր համոզմամբ կարևոր դեր ունի երեխայի՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի իրացման և դրա կենսագործման հարցում:

---

[1] Տե՛ս **Д. А. Пашенцев,** Преамбула в структуре Конституции: нормы права или политические декларации.// Вестник Академии права и управления, 2013, № 33, էջ 22 – 26:

Կարծում ենք, որ երեխայի բնակության վայրի մասին խոսելիս պետք է շեշտադրումը կատարել ոչ թե նրա մշտական կամ առավելապես գտնվելու կամ հաշվառման վայրի, այլ նրա փաստացի բնակության վայրի վրա: Նման անհրաժեշտությունը թելադրված է ոչ միայն նյութական օրենսդրությամբ, այլև դատավարական, քանի որ երեխայի բնակության վայրի իրավունքը՝ որպես ազատ տեղաշարժվելու իրավունքի բաղադրիչ և դրա կենսագործման միջոցներից մեկը, չի կրում անսահմանափակ բնույթ: Այն կրում է բոլոր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են երեխայի տարիքով, հասունության և զարգացման աստիճանով, երեխայի ինքնուրույնությամբ և այլ սուբյեկտիվ հատկանիշներով: Հետևաբար, որպես կանոն երեխայի բնակության վայրը համընկնում է օրինական ներկայացուցիչ/ներ/ի բնակության վայրի հետ և փաստացի նույնանում է այդ հասցեի հետ: Սակայն առանձին դեպքերում այն կարող է տարբերվել օրինական ներկայացուցչի բնակության վայրից և իրացվել ինչպես երեխայի կողմից ինքնուրույն, այնպես էլ օրենքով սահմանված կարգով պետական իրավասու մարմինների կողմից: Երեխայի բնակության վայրը նրա փաստացի գտնվելու վայրով սահմանելու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն իրողությամբ, որ բնակության վայրի որոշման առնչությամբ ծագած վեճերում պարտադիր է երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնի ներգրավումը (օրինակ՝ ծնողական իրավունքների սահմանափակման մասին հայց կարող է ներկայացնել երեխայի փաստացի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը կամ պաշտոնատար անձինք և այլ քաղաքացիներ, որոնց հայտնի են դարձել երեխայի կյանքին և առողջությանը սպառնալու, նրա իրավունքների և շահերի խախտումների դեպքեր, այդ մասին պետք է հայտնեն երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին):

Կարևորում ենք նաև Եվրոպական միության անդամ պետությունների կողմից պարտադիր հանդիսացող փաստաթղթերում տեղ գտած ուսումնասիրությունները և մոտեցումները, որոնցից, օրինակ՝ Բիս Բրյուսսել II փաստաթղթում «բնակության վայր» և «գտնվելու վայր» հասկացությունները նույնպես տարբերակվում են, այն է՝ «բնակության վայրը» օգտագործվում է «place of residence» տերմինով, իսկ «գտնվելու վայրը»՝ «place of temporary residence»[1]:

Վերոհիշյալ բոլոր դիտարկումները և օտարերկրյա փորձի ուսումնասիրությունը թույլ են տալիս հանգել այն հետևության, որ առկա է անհրաժեշտություն «բնակության վայր» հասկացության ձևակերպման և օրենսդրական մակարդակում դրա՝ որպես իրավունքի ինքնուրույն տեսակի ամրագրման: Այս հարցում կարևորում ենք հատկապես երեխայի բնակության վայրի սահմանման անհրաժեշտությունը, որպիսին, ինչպես վերը նշվեց, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ, իսկ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ «երեխայի բնակության վայր» արտահայտությունը միանշանակ չի ընկալվում, և չկա այնպիսի չափորոշիչ, որը թույլ կտար ի վերջո վերացնել հասարակության թյուրըմբռնումը երեխայի բնակության վայրի վերաբերյալ: Առավել կարևորում ենք «երեխայի բնակության վայր» հասկացության սահմանումը՝ պայմանավորված այն իրողությամբ, որ որպես կանոն այն չի տարանջատվում ծնողի կամ օրինական ներկայացուցչի բնակության վայրից, երբեմն նաև նույնացվում է հաշվառման վայրի կամ գտնվելու վայրի հետ, մինչդեռ մեր համոզմամբ դրանք տարբեր իրավական դեր և նշանակություն ունեցող հասկացություններ են:

Այսպիսով, մեր ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ ՀՀ օրենսդրությամբ որևէ իրավական ակտով սահմանված չէ երեխայի բնակության վայրի

[1] Տե՛ս Council Regulation (EC) No 2201/2003 of 27 November 2003 concerning jurisdiction and the recognition and enforcement of judgments in matrimonial matters and the matters of parental responsibility, repealing Regulation (EC) No 1347/2000:

հասկացությունը, որպիսի պայմաններում առաջարկում ենք կատարել լրացում «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում, այն է՝ «**Երեխայի հիմնական իրավունքները և դրանց երաշխիքները**» վերնագրված գլուխ II-ը լրացնել առանձին հոդվածով՝ «***Երեխայի բնակության վայրը***» վերտառությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Երեխայի բնակության վայրը Հայաստանի Հանրապետության սահմաններում գտնվող այն բնակելի տարածությունն է, որտեղ երեխան փաստացի բնակվում է միայնակ կամ օրինական ներկայացուցչի (ներկայացուցիչների) հետ»:

Նշված փոփոխությամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ, ուստիև առաջարկում ենք՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204-րդ հոդվածի 2-րդ մասը փոփոխել հետևյալ կերպ. ***«2. Հայցադիմումը ներկայացվում է երեխայի փաստացի բնակության վայրի ընդհանուր իրավասության դատարան: Երեխայի փաստացի բնակության վայրը անհայտ լինելու դեպքում հայցադիմումը ներկայացվում է կենտրոնական մարմնի գտնվելու վայրի դատարան»***:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը փոփոխել հետևյալ կերպ. ***«2) Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի անունը, փաստացի բնակության վայրը (եթե հայտնի է)»***:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 2-րդ մասը փոփոխել հետևյալ կերպ. ***«2. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ մինչև Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործով վճռի օրինական ուժի մեջ մտնելն արգելում է պատասխանողին փոխել երեխայի փաստացի բնակության վայրը»***:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 1-ին մասը փոփոխել հետևյալ կերպ. ***«1. Երեխա որդեգրելու վերաբերյալ դիմումը տրվում է որդեգրվող երեխայի հաշվառման, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ փաստացի բնակության վայրի առաջին ատյանի դատարան»***:

THE CONCEPT OF THE CHILD'S RESIDENCE

Hayarpi Zargaryan
PhD student at the YSU Chair of Civil Law,
Judge at the Court of the First Instance of Yerevan

In the context of the child's right to free movement, the child's right to a place of residence is exercised, which, as an independent right but an integral part of the right to free movement, needs to be defined and enshrined in law.

A study of domestic legal acts shows that they do not define the concept of a person's place of residence, moreover, there is no definition of "place of residence of a child".

It is not provided by the legislation of the Republic of Armenia, and the study of the case law shows that the phrase "place of residence of the child" is not clearly understood.

This article proposes to make an addition to the RA Law on the Rights of the Child, that is, to supplement Chapter II entitled "Fundamental Rights of the Child - Their Guarantees" with a separate article entitled "Place of residence of the child".

ПОНЯТИЕ МЕСТА ЖИТЕЛЬСТВА РЕБЁНКА

АйарпиЗаргарян
Соискатель кафедры гражданского права ЕГУ,
Судья суда общей юрисдикции города Еревана

В контексте права ребёнка на свободное передвижение осуществляется право ребёнка на место жительства, которое как самостоятельное право, но как неотъемлемая часть права на свободное передвижение, должно быть определено и закреплено в законе.

Изучение отечественных правовых актов показывает, что в них отсутствует определение понятия «место жительства» лица, более того, отсутствует определение понятия «место жительства ребёнка».

Это не предусмотрено законодательством Республики Армения, и изучение прецедентного права показывает, что фраза «место жительства ребёнка» не совсем понятна.

В данной статье предлагается внести в Закон РА «О правах ребёнка» дополнение, то есть дополнить главу II «Основные права ребёнка - их гарантии» отдельной статьей «Место жительства ребёнка».

Բանալի բառեր-*գտնվելու վայր, բնակության վայր, մշտական բնակության վայր, կացարան, բնակության վերջին հայտնի վայր, երեխայի փաստացի գտնվելու վայր, անձի հաշվառման հասցե, անձի իրավաբանական հասցե:*
Ключевые слова - *местонахождение, место жительства, место постоянного проживания, место проживания, последнее известное место жительства, фактическое местонахождение ребенка, адрес регистрации лица, юридический адрес лица.*
Key words -*location, place of residence, place of permanent residence, accommodation, last known place of residence, actual location of the child, registration address of the person, legal address of the person.*